

զրկել ն. վեհափառութեան կարնոյ
հիւ պատուէն տաղած երկու գրու-
թեանց պատճենները: Օ. Հ. ԼԵՅՐԾ
ԹԻՖԼԻՍԻ Կարմիր 10 յուլիս 1879

«Սրբ»
«Դու ուր 4000 դաղթական Բու-
մէլէն Մշոյ գաւառը զրկել միտք
ունենալուն վրայ Հայոց Պատրիար-
քին բրած գանդատին նկատմամբ
յուսիս 23 թուով 26ր վսեմութեան
զրկած գրութեան ի պատասխանի,
պատիւ ունիմ յայտնել թէ երէկ
վաղի վաղային այցելութիւն տուի
հարցնելու համար թէ այս լուրը ճշ-
մարի՞ն է արդեօք»:

«Ն. վսեմութիւնն ըստ թէ այդ-
լուրն ինք այժմ առաջին անգամ կը
լսէ, բայց ըստ որում Մուշ վանայ
նահանգին մէջ է և ոչ թէ Կարնոյ,
կարելի էր թէ. խիստ անհասկա-
հան՝ որ այդպիսի անօրէնութիւն մը
լինի առանց իւր տեղեկութեան»:

«Իմ կողմէն ևս ալ կրնամ յարել
թէ ըստ որում բոլոր գաղթականք
Կարնոյ նահանգէն պիտի անցնին
Մուշ երթալու համար, հաւանա-
կան չէ որ այդպիսի անօրէնութիւն
մ'որոշուած լինի առանց Կարնոյ վա-
լիին գիտութեան»:

«Կայսերական Բոմբէրք ալ այս
նկատմամբ ըստ տեղեկութիւն չը
կրցին տալ ինձ»:

«Ըստ որում գաղթականաց տե-
ղութեան կեդրոնական յանձնա-
խումբը Կ. Պոլիս կը նստի, կառա-
ջարկեմ որ այն յանձնախումբէն տե-
ղեկութիւն առնուի»:

«Կարելի է որ Ասիոյ կողմէն վեր-
ջերս Ռուսիոյ թողուած երկիրներէն
մաս մը գաղթականաց Մշոյ գաւա-
ռը զրկուելու առաջարկը ծնունդ
տուած լինի այն զրոյցին թէ Բու-
մէլէն 4000 դաղթական պիտի զըր-
կուի»:

«Այժմ Կարնոյ, Ուստանայ և
Ուլիի գաւառներէն մեկնող գաղ-
թական բնակչոյ թիւը տեղւոյս իշ-
խանութեանց կողմէ 8000էն մինչեւ
10000 կը հաշուի: Ասանք ամեն օր
Կարնոյ կը հասնին մեծ թուով,
թէ և ոչ չափազանց քանակութեամբ,
և քիչ մը վերջը գէպի հիւսիս և
գէպի արևմուտք կը զրկուին: Ա-
սանք ի վերջոյ հաւանականաբար
Կարնոյ, վանայ, Սեբաստիոյ, Տի-
արպէքիւրի և Կեսարիոյ վերայէն»:

ըր պիտի գրուէն, և տարակոյս չը-
կայ թէ անոնց մէկ մասն ալ Մշոյ
գաւառը պիտի զրկուին, թէ և չեմ
կրնար իմանալ թէ սրբոյ, և թե-
րեւ Կ. Պոլսոյ գաղթականաց կեդ-
րոնական յանձնախումբը միայն կըր-
նայ տալ պէտք եղած տեղեկութիւն
նը: Վսեմ. վալին տեղեկութիւն
տուալ ինձ թէ Մշոյ գաւառին մէջ
արդեւանդ հայերու ընդարձակ տա-
րածութիւններ կան, որք անմշակ
կը մնան, և թէ պէտք մեծ քանակու-
թեամբ գաղթականաց ներկայու-
թիւնն արդէն կեցած անկարգու-
ղութեան բազմաթիւ տարերաց վը-
րայ անտարակոյս նոր տարր մ'ալ
պիտի յաւելու, այսու ամենայնիւ
այս այնպիսի բան մ'է, որուն առաջ-
քը գծուարու կրնայ առնուիլ:
Գաղթականք և ոչ մէկ կողմ լուրն
գունակութիւն կը գտնեն. և թէ-
պէտ տեղւոյս փաշան բաղում գաղ-
թական զրկելու միտք ունի ի Տի-
արպէքիւր, բայց դիտեմ որ Տիար-
պէքիւրի քրիստոնեայք և կարծեմ
վալին ալ այդ գաղթականներն ըն-
դունելու դէմ այնքան հակալու-
թիւն կը ցուցնեն՝ որչափ Հայոց
Պատրիարքը կը ցուցնէ ի գիմաց
Մշոյ ժողովրդեան: Փոքր-Նիկոյ միւս
բոլոր վերայէններուն համար ալ
այդպէս լինիլ կը թուի: (1)

«Կարնոյ չըմակաները բնակող
զիւզացիք սաստիկ կը գանդատին
թէ իրենց կառքերն ու ջորիները
բունի գրաւուած և գաղթականաց
փոխադրութեան գործածուած են
առանց վճարման»:

«Այս դործն երէկ Կայսերական
Բոմբէրքայ առջև եկաւ, և հեռա-
գիր մը զրկուեցաւ Դուռը խնդրե-
լով որ իշխանութիւն տրուի իրենց
պէտք եղած վճարմաններն ընելու՝
կառքերու վարձուց համար, որոց
բունի գրաւումը բնականաբար ան-
խուսելի և հարկաւոր է, թէ և մաս-
նաւոր կերպիւ ծանր է ժողովրդեան»:

(1). — Մեծ սխալ է Այն գաւառնե-
րն, ուր քրիստոնեայ ժողովրդեան մեծ
բազմութիւն կը բնակի, բնականա-
բար աւելի հակալուծիւն կը ցուցնեն
գաղթականաց դէմ: որովհետեւ ստոյգ
է որ գաղթականք տեղի չարիք կը պատ-
ճառեն երբ քրիստոնեայ ժողովրդեան մը
մէջ կը բնակին, քան երբ Խուսմ (այս
ինքն կրօնակիր և զինեալ) ժողովրդեան
մը մէջ: Ծ. Խ.

համար, ըստ որում հունձքերն ըս-
կըսելու վրայ են:

ՀԵՆՐԻ ԹՐՈՅԹՐՐ

Հասարակ, հեռադատ Գիւղարարաց համար

Պ. Թրոյթըրին վերոյիշեալ երկ-
րորդ գրութիւնն ի կարգին կը թարգ-
մանեմք: Այժմ ստացաւ միայն ըսեմք
թէ Անգղիական հիւպատոսն այս
գրութեան մէջ կը ծանուցանէ՝ ի
մէջ այլոց՝ թէ ինք Տիարպէքիւրէն
մեկնած ժամանակ Պ. Պոյաճեանն ա-
նուն անձ մը Տիարպէքիւրի Գործօն
Հիւպատոս կարգած էր, բայց Դու-
ռն այս անունանումը վաւերացնել
չէ ուզած: Այսու ամենայնիւ, Պ.
Թրոյթըր Պ. Պոյաճեանի տեղեկագը-
րոց վրայ հիմնելով տեղեկութիւն-
ներ կուտայ Անգղիական գեսպանին:

Եւրոպայէն

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 28 նոյ.

Եւրոպայիցն այս առաւօտեան լը-
րագրաց մէջ հրատարակեալ հեռագիր մը
կը ծանուցանէ թէ Պ. Կրատսիօն կը շա-
րունակէ ինքզինք ընտրելի ներկայացու-
ցած գաւառին այլեայ աւանդ ընտրող-
ներուն ներկայանալ:

Նրէկ իրիկուն ըրած ատենախօսու-
թեան մը մէջ վերստին պարսաւեց կա-
ռավարութիւնն հրատարակեալ գանձ վառ-
նելուն և Աֆղանստանայ և Զուլուստա-
նայ մէջ պատերազմներ մղելուն պատ-
ճառաւ, որոց արդիւնքը վտանգալից է
սպառազանց համար: Յետոյ կառավարու-
թեան Արեւելեան աշխարհավարութեան
պատմութիւնն ըրաւ և անոր պարունա-
կած ամեն հակասութիւններն երեւան
հանեց: Գլխաւորապէս հաստատեց թէ
կառավարութեան թուրքիոյ մէջ ի դործ
գրած աշխարհավարութիւնը, Կ. Պոլսոյ
գեսպանախորհրդէն և Պէրլինի վեհաժո-
ղովէն մինչև այսօր ուրիշ արդիւնք չունե-
ցաւ բայց միայն համապատեղութեան ազ-
դեցութիւնն աւելցուց թուրքիոյ Գրիս-
տոնեայ ժողովրդոց վրայ:

Յետոյ հաստատեց թէ կառավարու-
թիւնն օդնեց Ռուսիոյ հոյին ընդար-
ձակման: Վերջապէս հաստատեց թէ
կառավարութիւնը Ռուսիոյ բարոյական
գորութիւնն աւելցուց, թուրքերը Սլաւաց
դէմ հանելու ճիգեր թափելով, որով
վերջինները զայրացան Անգղիոյ դէմ, և
Ռուսիոյ զինքն ինկան:

Լոնտոն, 28 նոյ.

Այս առաւօտ հրատարակեալ հեռա-
գիր մը կը հաւաստէ թէ Ռուսիա մեծ
փութով արշաւանք մը կը պատրաստէ

Մէրվի դէմ՝ յառաջիկայ գարնան՝ Աթ-
թիսի ձորին երկայնութեամբ:

Կառավարութեան Անգղիոյ Պաշտա-
լին ունեցած երբեքն պարտքը բաւա-
կան մեծցաւ՝ Աֆղանստանայ պատե-
րագրին պատճառած ծախքէն:

Վիէննա 28 նոյ.

Նախարարական լրագիրք այս առա-
ւօտ կը հերքեն Ռուս լրագրաց տուած
այն լուրը թէ թուրքիոյ և Անգղիոյ յա-
րաբերութիւնը խիստ ձկուեալ են:

Այս լրագրաց խօսքին նայելով, Ա-
ւրոտիոյ կառավարութիւնը տեղեկու-
թիւն առաւ թէ յիշեալ երկու տէրու-
թեանց յարաբերութիւններն ընդհակա-
ռակն են՝ վերստին խիստ սիրայիկ եղած
են՝ ըսելի որ թուրքիա տալոյցիներ
առեւեր է թէ բնաւ իւր մտքէն չանցու-
նէր թուրք իւր աշխարհավարութիւնն՝
որ Պէրլինի գաղնադրութեան ամեն կէ-
տեն հաւատարմութեամբ դործադրե-
լու վրայ պէտք է հիմնուել ինի, ինչ-
պէս նաեւ այն համագիտութիւն Անգղիա
թուրքիոյ հաստատ մնալն ու յառաջի-
մէն իւր արեւելեան աշխարհավարու-
թեան գլխաւոր պայմաններէն մին կը
համարի:

Այս առաւօտ համար հեռագիրք

Պէրլին 28 նոյ.

Բնկերավարականայ դէմ ձեռք առնը-
ւած պաշարման վիճակի անօրէնութիւնք
տարի մ'երկարաձգեցան:

Տըպլին 28 նոյ.

Պ. Բէլլէն այսօր բանտարկեցաւ: Մեծ
յուզում կը տիրէ Նրլանտիոյ մէջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Երեկուան Մօնիթէօր արեւ. Բոմբէ-
րի մէջ հեռուեալ գոհացուցիչ լուրը
կը կարգամք՝ թէ ևս ստուգութեանը
չեմք կրնար փոխադրի:

«Լոնտոնիցն եկած մասնաւոր լու-
րեր կը ծանուցանեն թէ Արեւելեան
Բումբէրի Եւրոպական յանձնախումբին
երբեմն Անգղիական առաջին պատ-
ուիրակ Սըր Հէնրի Տրեմմենտ Ուօլֆի
(որ Մասիսի ընթերցողաց ծանօթ է
թուրքիոյ մէջ ապակեդրոնացման
գրութեան հաստատութիւնը պա-
հանող բանախօսութեամբը) Անգ-
ղիական կառավարութեան արեւել-
եան աշխարհավարութեան վերաբե-
րութիւնն ունեցող կարեւոր պաշտօնի
մը պիտի կոչուի ի Փոքր-Ասիա, որոյ
գլխաւոր քաղաքաց միզին մէջ պիտի
նստի Լօր Զայ Բաֆֆը (Բաքիճաղոյն
Բոմբէր կամ Տեսուչ) տիպոգրոսով:
Անգղիոյ մէջ գորուոր համալուսի կայ
թէ ամեն կարելի օգնութիւն պէտք

ԲԱՆԱԿԱՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՏԱՂ ԹՈՉՆՈՅ
ՀԱՆԵԱԼ Ի ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԻ
ԴՐՁՈՂՐԱՅ
Թ. Թ. ԱՆՏՈՆԵԱՆ ՀԱՐՑ ԵՐԹԱՔԻՍԹ

(Եւր. տեա թիւ 2476)

Ի. Կեռքաւորաց հաւուկ մի կայր,
Հագեւ կապուտ կու պարծենայր,
Թէ զայս հաւերս որ գովեցիր,
Ձինչ զիմ փետուրս խիլի չը կայր:

ԻԱ. Ձանգուռն ասէր աւետարեւր,
Երգեհոնի պէս կու ցնծայր,
Ձերթ գրաբրիէլ փողն գոչէր,
Յառեւէր մեռեալքն հաւատար:

ԻԲ. Դուսիքն անբիծ աղօթարար,
Ձնալու սարման ասէր երկար,
Անձն է հաղեւ կարմիր շուրջաւ,
Ձինչ քահանայ հանգարարար:

ԻԳ. Կովկասեանի կէր քար Էնդ-
բայր,
Կով կորուսել ի շուրջ կուգայր,
Քուրուկ ասէր՝ զկոյն գտայր,
Եղբայրն ասէր թէ չիկայ ճար:

ԻԴ. Ծիծերակին ի շէնքն գայր,
Թիւ հայրն քուն էր տաճար:

Ենէր նրաւէր վերայ բունին,
Սաղմոս ասէր զօրն անգագար:

ԻԵ. Յաղապիկն էր զարգարիւ,
Ի գլուխ գրեւ թագ ու կատար,
Ինքն յերակ յեղեր շինար,
Կամ քաղաքաց պարիսպ կենայր:

ԻԶ. Նորուալն ի շէնքն կու կենայր,
Յամէն ծակ ցուրիքերէր իւր ձայն գայր
Ինքն տարի ապրէր հաղար,
Ով զայն սուտէր խիստ շնանայր:

ԻԸ. Կաւկասեանի բարձրակատար,
Ինքն ի թմբի եղեր կենայր,
Թէ բեկանէր անհաճարար,
Պրտակաղբում փող մի չը տայր:

ԻԹ. Կոտայիկն է տանուտէր,
Տանն ի յալուքն կու կենայր,
Երբ առաւօտն ժողովարար,
Ձուրահակներուն խաղար տայր:

ԻԺ. Անձեղանն աղին է խիստ երկար
Կու պորտարար ի ծառէ ծառ,
Յորժամ բարի խաղար լըսէր,
Կու գայր կանչէր երգիքն վայր:

ԻԿ. Թութակն ամէն գարգառիկնայր
Ձերուր Տիկինն որ բողանայր,
Ձինչ բան առեւէր նա իմանայր,
Պարոնքն գայր՝ նա խաղար տայր:

ԻԱ. Ձունձուկան աշունքն գայր,
Աղբալարէր ինքն հաւատար:

Թէ ով կապայ ունի անկար,
Նա թող կարէ չիցըրտանայր:

ԻԲ. Լըծէլըծէն գարունըդայր,
Շինականներուն խաղար կուտայր,
Լըծէլըծէլ դու ըզտաւար,
Ձինչ հաւան պէկէ կալ զարտավար:

ԻԳ. Ձահրիկն է զէտ ըլծարար,
Ու կու մանէ զինչ մանձարար,
Շարաթն ի բուն խիստ կու ջանայր,
Եւ կիւրակն մանած չը կայր:

ԻԴ. Պըլալուն ի վարդն կարօտ կայր
Ձինչ որ սիրեն երկուն զիրար,
Պըլալուն ի վարդին սիրուն,
Ձօրն լինայր խե ու խումար:

ԻԵ. Եղնարօտիկ հաւն էր տըռար()
Հետ ակօնն ի ժու. կուգայր,
Քաղէր զորդունքն և կըլլանայր,
Եւ ձագերուն առնէր գնայր:

ԻԶ. Բուրեճին աղին լաղայր,
Արեգական լոյս չի տեսնայր,
Ինքն զիշերն ի ժու. կուտայր,
Գաղն գառար() մարդն իմանայր:

ԻԷ. Յովանակն փըչէր սաքաւ,
Ձերգ ծնծղակի ձայնն կուգայր,
Նա հագեր էր շուրջաւ դեղին,
Եւ ի պաղչայքն ի շուրջ կուգայր:

ԻԸ. Սարկին երբ որ սարսէր,
Ի գող ելէր զէտ գիւտհար,

Ձերգ ըզգուսան չալխարարի,
Ինքն զարնէր ինքն խաղայր:

ԻԹ. Պըլըլըլուն գըլըլըլն քար,
Ինքն ի շընդկաց աշխարհին կայր,
Ձըլըլըլն ծեծին յերկաթ ու քար,
Խակի չանէր թէ ցաւ կուտայր:

ԻԺ. Մեղուաքաղին մեղքն էր երկար
Թողուր զմարեղն որ շատանայր,
Ձմեղուն քաղէր անխղճարար,
Որ կու գատի մեղրի համար:

ԻԱ. Ճընկուճիւ հաւուկ մի կայր,
Ճուպայ կ'ուզէր խիստ մանաբկար,
Երբ որ կըռակն տաքանայր,
Ոչ կայր ճուպայ ոչ մանաբկար:

ԻԲ. Մաշկաթիւ հաւուկ մի կայր,
Ձօրն ի քարերն երթայր մնայր,
Ինքն իւր անձինն վայ կու տար,
Ինքն իւր անձինն վայ կու տար:

ԻԳ. Մանկաթիւն պիտի խղճալ,
Ինքն չիարէր նրաթիւ ի վայր,
Քաւէլ թէ բարձր տեղի լինար,
Ինքն թուէր անկի ի վայր:

ԻԴ. Սունուբայն երբ բարձրանայր,
Իր շուքն ի շուքն երկնայր,
Գիտէր թէ հաւ էր՝ կըռիւ տայր,
Երթայր խեղդէր ի ջուրն ի վայր:

ԻԵ. Շահէն բազան էր շահարար,
Ինքն ի ամէն գարգառ կենայր,

